
**«ԴԱՎԻԹ-ԲԵԿ» ԿԻՆՈՆԿԱՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ
(նվիրվում է Էկրանավորման 60-ամյակին)**

ՏՈՆԵՅԱՆ ՈՒ. Ս.

Սպասելի էր, որ 1930-ական թվականների վերջերին Հայկինոյի ունեցած գեղարվեստական և վավերագրական կինոնկարների քանակական և որակական մակարդակը, մանկական կինոյի ասպարզում ձեռք բերած հաջողությունները կստանային իրենց հետագա զարգացումը: Սակայն սկսված Հայրենական մեծ պատերազմը խորհրդահայ կինեմատոգրաֆիստների առջև դրեց նոր խնդիրներ, և նրանք իրենց գործունեությունը վերակառուցեցին պատերազմի պահանջներին համապատասխան: Պատերազմի տարիներին մեծ վերելք ապրեց հատկապես գեղարվեստական կինեմատոգրաֆիան, որը քարոզում էր պատմահայրենասիրական թեմատիկան: 1942 թ. Երևանի կինոստուդիայի կոլեկտիվը ձեռնամուխ եղավ հայ ժողովրդի պատմական անցյալը պատկերող կտավի ստեղծմանը: Գեղարվեստական խորհրդի որոշմամբ, համապատասխան սցենարի բացակայության պայմաններում, ապագա կինոնկարի հենք ընտրվեց մեծանուն վիպասան Րաֆֆու «Դավիթ-Բեկ» պատմական երկը, որի Էկրանավորման գաղափարն անցյալում ևս զբաղեցրել է Հայկինոյին: Այսպես, դեռևս 1920-ական թվականներին «Խազվուշի» Էկրանավորման ժամանակ մտադրություն կար «Դավիթ-Բեկը» Էկրան բարձրացնել,- գրում է ազգային կինոյի երախտավոր Դ. Դզունին,- սակայն անհատի պաշտամունքի ձևավորման և գաղափարական սուր պայքարի պայմաններում, մանավանդ, մեծ վիպասանի մասին եղած անբարեհույս կարծիքի հետևանքով, այդ ցանկությունն իրականություն չդարձավ»¹: Հայրենական մեծ պատերազմի տարիներին, սակայն, աշխատավորության գաղափարական, ռազմահայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքներում կուսակցությունն ու կառավարությունը մեծ տեղ հատկացրեցին մշակույթին՝ որպես ժողովրդի հոգևոր ուժերը համախմբող կարևոր գործոնի²: Այս պայմաններում բարենպաստ հող էր ստեղծվել այդ վաղեմի մտադրությունն իրականացնելու համար: Բայց, միաժամանակ, կինոստուդիայի ստեղծագործական կոլեկտիվը կանգնած էր դժվարությունների առաջ: Նախ, ինչպես նշվեց, չկային պատրաստի սցենար և լիբրետո, մյուս կողմից, կոլեկտիվը պատմական մեծ կտավի Էկրանավորման փորձ չունեւ: Չնայած այդ ժամանակ կենտրոնական կինոստուդիան թողարկել էր պատմական թեմաներով կինոնկարներ, ինչպիսիք էին՝ «Պետրոս Առաջին», «Ալեքսանդր Նևսկի», «Իվան Ահեղ», «Կուտուզով», բայց «Այլ բան է նման թեմաներով կինոնկարների դիտումը,- իրավացիորեն գրում է Հ. Բեկնազարյանը,- այլ է, երբ անձամբ ես փորձում

¹ Տե՛ս **Դզունի Դ.**, Ուրվագիծ Հայաստանի կինեմատոգրաֆիայի պատմության, Ե., 1961, էջ 114:

² Պրավդա, 26.VIII. 1941:

ստեղծել, որը պահանջում է լուրջ և տևական աշխատանք»³: «Դավիթ-Բեկ» պատմական կինոնկարի սցենարը գրեց հեղինակների մի պատկառելի խումբ՝ Ս. Հարությունյան (գրել է առաջին տարբերակը), Վ. Մուլվյով, Յա. Դուկոր, Հ. Բեկնազարյան և Գր. Չախիրյան: Հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը լի է ազատության ու երկրի անկախության համար նրա որդիների մղած պայքարի հերոսական դրվագներով, որոնցից մեկն էլ պատկերվեց «Դավիթ-Բեկ» պատմահայրենասիրական լիամետրաժ գեղարվեստական կինոնկարում: XVIII դ. առաջին քառորդն է: Հայաստանը հեծում է հարևան երկու հզոր բռնակալ տերությունների՝ Թուրքիայի և Պարսկաստանի տիրապետության տակ: Բայց անկոտրում է հայ ժողովրդի ազատատենչ ոգին: Հայ մելիքների հրավերով Վրաստանից Հայաստան է շտապում անվանի զորավար Դավիթ-Բեկը և գլխավորում պարսկական զավթիչների դեմ ծայր առած ապստամբությունը: «Երբ աշխատանքը գրական սցենարի վրա ավարտվեց,- գրում է Հ. Բեկնազարյանը,- ՄՍՀՄ կինեմատոգրաֆիայի պետկինոյի նախագահ Ի. Բոլշակովի հրավերով ես այն տարա Մոսկվա վերջնական հաստատման, քանի որ օտարերկրյա զավթիչների դեմ նախնիների մղած հերոսական պայքարն արտացոլող պատմահայրենասիրական կինոնկարներին այն ժամանակ առանձնահատուկ նշանակություն էր տրվում»⁴:

«Դավիթ-Բեկը» էկրան բարձրացավ 1944 թ. սկզբներին և ունեցավ շոնդալից հաջողություն: Բավական է ասել, որ կինոնկարի ստեղծագործական և դերասանական կազմի մի ստվար խումբ արժանացավ ԽՍՀՄ պետական մրցանակի և կառավարական պարգևների: Այդ հաջողությունը պայմանավորված էր ոչ միայն կինոնկարի գաղափարական ու գեղարվեստական արժանիքներով, ոչ միայն պատմական նյութի ըստ ամենայնի մշակմամբ, այլև դերասանական կազմի հաջող ընտրությամբ: Կինոնկարում ընգրկվել են հանրապետության տաղանդավոր դերասաններ. Հ. Ներսիսյանը՝ Դավիթ-Բեկ, Դ. Մալյանը՝ Մտ. Շահումյան, Ա. Ավետիսյանը՝ Մելիք Ֆրանգյուլ, Ֆ. Դովլաթյանը՝ Մանսուր, Վ. Մարգունին՝ Ասլամազ Դուլի խան, Մախմուրյանը՝ Գայանե, Ա. Սարյանը՝ Զեյնաբ, Հասմիկը՝ դայակ, Վ. Երշովը՝ Պետրոս, Ն. Սվերդլովը՝ դեսպան, Ե. Սամոյլովը՝ թնդանոթաձիգ Կասյանով: Կինոնկարի ռեժիսոր Հ. Բեկնազարյանը հետաքրքիր լուծում է տվել կտավին նյութի մատուցման տեսակետից: Այսպես, ծերունի ասացողի միջոցով հանդիսատեսը հաղորդակից է դառնում հայ քաջորդիների մղած ազատագրական պայքարի հերոսական պատմությանը: Պատմական նյութի մոտեցման այդ յուրահատկությունը չի վրիպել կինոքննադատի ուշադրությունից: Ահա թե ինչպես է գնահատում այդ նորամուծությունը Օլեգ Լեոնիդովը. «Գեղարվեստական յուրատեսակ այդ փորձը, հանձինս տարեգրի՝ իբրև պատմական ֆիլմի անձնավորման, իրադարձություններին տալիս է էպիկական կառուցվածք, նրանում կարծես լսվում են պատմության ահեղ ոտնաձայնն ու վեհասքանչ երաժշտությունը»⁵: «Դավիթ-Բեկի» մեկ այլ քննախոս՝ Էլ. Ռեզիստանը, շեշտելով

³ Բեկնազարյան Հ., Հուշեր դերասանի և կինոռեժիսորի, Ե., 1968, էջ 268:

⁴ Նույն տեղում, էջ 269:

⁵ *Московский большевик, февраль, 1944:*

կտավի համամարդկային բնույթն ու նշանակությունը՝ գրում է. «Դավիթ-Բեկ» կինոնկարը ոգևորում է հայի սիրտը նույն կերպ, ինչ կերպ ռուսի, ուկրաինացու, սովետական յուրաքանչյուր մարդու սիրտը՝ հայրենքի հանդեպ ցուցաբերած անհանգստությամբ, սիրով և զավթիչների նկատմամբ տաճած խոր աստելությամբ»⁶: Կինոկարը բարձր են գնահատել հայ գրականության մեծություններ Ավ. Իսահակյանն ու Դ. Դեմիրճյանը: «Անհնար է հասկանալ, ըմբռնել մեր ժամանակաշրջանը,- գրում է «Վարդանանքի» հեղինակը,- անտեղյակ լինելով, չիմանալով, մեր անցյալը»⁷: «Ամնոռանալի են Տաթևի վանքում մելիքների ժողովի, գորքի երդման արարողությունը, Մտ. Շահումյանի այցը մելիք Ֆրանգուլի աղջիկ Գայանեին, Դավիթ-Բեկի գիշերային շրջայցը մարտադաշտում, երտասարդ իշխան Մանսուրի մահվան և այլ տեսարաններ»,- գրում է Ավ. Իսահակյանը⁸: Կինոնկարի մասին իրենց գրախոսականներում բարձր կարծիք են հայտնել նաև Ն. Անտոնովան⁹, Մ. Ճիաուրելին¹⁰ և ուրիշներ: Կինոնկարը զուրկ չէ հուզականությունից, հատկապես, հայ կնոջ ազնիվ արարքը գորահանդեսի տեսարանում, երբ մոտենալով Դավիթ-Բեկին և իր վրայից հանելով զարդերը՝ կինը դրանք տալիս է գորավարին՝ ասելով. «Թող տղամարդիկ այս ոսկին փոխարինեն սրով և սրով կռեն հաղթանակ»: Մյուս կանայք ևս հետևում են նրա օրինակին: Զարմանալի զուգադիպությամբ, երդման դրվագի նկարահանման պահին սրահ է մտնում ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանը: Դավիթ-Բեկի դերակատար Հր. Ներսիսյանն այն սուրը, որի վրա քիչ առաջ ինքը հավատարմության երդում էր տվել, մեկնում է Ն. Ստեփանյանին՝ երդվելու: «Երդվում եմ,- ասում է հերոսը՝ վերցնելով սուրը,- որ կվերադառնանք հաղթանակով»¹¹: Ցավոք, փառաբանված հերոս օդաչուն չվայելեց հաղթանակի բերկրանքը, բայց այդ տեսարանը օրգանական կապ է ստեղծում պատմական անցյալի և ներկայի միջև: Չնայած կինոնկարի ստեղծագործական խումբը շատ է հեռացել Բաֆֆու երկի բուն նյութից, բայց դրանից չի խախտվել պատմական հենքի գաղափարական կողմը: Այսպես, օրինակ, կինոնկարում շոշափված է ժողովուրդների բարեկամության թեման: Դավիթ-Բեկը կարողացավ միավորել հայ մելիքներին և համախմբել ժողովրդական զանգվածներին, բայց իբրև փորձված գորական, նաև նկատում է, որ ուժերն անհավասար են թշնամու դեմ հաջող պայքար մղելու համար: Ուստի Հայաստանից դեսպանություն է մեկնում ռուսական արքունիք՝ Իսրայել Օրու գլխավորությամբ, Պետրոս Առաջինից օգնություն խնդրելու: Պատահական չէ, որ կինոնկարի հեղինակները դիմել են պատմական այդ վարկածին: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, երբ ԽՍՀՄ ժողովուրդները հերոսական պայքար էին մղում թշնամու դեմ, առանձնապես կարևոր էր մեկ անգամ ևս ընդգծել ռուս ժողովրդի հետ դարավոր բարեկամության առաջադիմական նշանակությունը հայ

⁶ Правда, 8. II. 1944.

⁷ Коммунист, 27. II. 1944.

⁸ Սովետական Հայաստան, փետրվար, 1944:

⁹ Армянская правда, Калинин, март, 1944.

¹⁰ Литература и искусство, февраль, 1944:

¹¹ Սովետական արվեստ, 1975, N 5, էջ 31:

ժողովրդի համար: «Ֆիլմի գաղափարական հնչեղության մեջ,- գրում է Կ. Քալանթարը,- խիստ կարևոր մոտիվ է ներմուծում այն, որ դրվագի եզրափակիչ կադրերում Պետրոս Առաջինը, ըստ էության, ինքն է առաջարկում այն զորապետի անունը, որն արժանի է գլխավորելու հայ ժողովրդի ազատագրական պայքարը: Այդ զորապետը Դավիթ-Քեկն է»¹²: Կինոնկարի հեղինակներին լիովին հաջողվել է լուծել իրենց առջև դրված խնդիրը: Նրանք ստեղծել են պատմահայրենասիրական թեմայով մի մեծ գործ, որը չի վրիպել կինոյի պատմաբան Ս. Գինզբուրգի ուշադրությունից: Անդրադառնալով խորհրդային կինեմատոգրաֆիայի այդ տարիների ստեղծագործություններին՝ վերջինս գրում է. «Դժբախտաբար, պետք է նշել, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին թողարկած կինոնկարներից քչերն էին, որ գաղափարա-գեղարվեստական տեսակետից հագեցած էին այնպիսի արժանիքներով, ինչպիսին ունեին նախապատերազմյան տարիներին թողարկված լավագույն կինոնկարները: Ոչ Ս. Էյզենշտեյնի «Իվան Ահեղը», ոչ էլ Մ. Ճիաուրելու «Գեորգի Սասկաձե» երկմասանոց պատմական կինոնկարի կերպարը, որը հայրենիքի համար մղած իր պայքարում առաջնորդվում էր ոչ ուղիղ ճանապարհով, չէին կարող ձեռք բերել իսկական, համաժողովրդական հերոսի հնչեղություն: Իսկական ժողովրդական կերպարի բացահայտմանն էին նվիրված,- շարունակում է Ս. Գինզբուրգը,- երկու պատմական այլ կինոնկարներ՝ «Կուտուզովը», ռեժիսոր՝ Վ. Պետրով, և Հ. Բեկնազարյանի էկրանավորած «Դավիթ-Քեկ» պատմական կինոնկարը, որը պատկերում է հայ ժողովրդի ազատագրական պայքարի մի դրվագ օտար զավթիչների դեմ»¹³: Ավելացնենք, որ «Դավիթ-Քեկ»-ում ռեժիսոր Հ. Բեկնազարյանը հասավ նոր հաջողության՝ կրկին ապացուցելով, որ ինքը զանգվածային տեսարանների մեծ վարպետ է, զանգվածային տեսարաններ, որոնց երբեմն մասնակցում էր 4000-ից ավելի մարդ¹⁴: Կինոնկարի ստեղծմանը մասնակցել է նաև ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, «որի շնորհիվ,- Հ. Բեկնազարյանի վկայությամբ,- մեր նկարիչներին Մ. Արուտչյանի գլխավորությամբ հաջողվեց արտակարգ ճշտությամբ վերականգնել այդ դարաշրջանի զգեստները, պատմականորեն ճիշտ կահավորումը, համապատասխանորեն զինել Դավիթ-Քեկի մարտիկներին»¹⁵: Կինոնկարում հնչող երգի խոսքերը գրել է Ավ. Իսահակյանը, իսկ կոմպոզիտոր Ա. Սաթյանը, օգտագործելով ժողովրդական հարուստ մեղեդիներ, ստեղծել է բարձրարժեք երաժշտություն, որը գուսանի կատարմամբ հասնում է կատարելության, հնչում որպես մարտակոչ, խրախուսում մարտիկներին, նրանց մղում հերոսական պայքարի:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին էկրան բարձրացած «Դավիթ-Քեկը» իր բովանդակությամբ և գաղափարական-հայրենասիրական նպատակաուղղվածությամբ միանգամայն

¹² Քալանթար Կ., Համո Բեկնազարյան, Ե., 1986, էջ 238:

¹³ Гинзбург С., *История советского кино*, М., 1959, с. 55.

¹⁴ Տե՛ս Դզունի Դ., նշվ. աշխ., էջ 114:

¹⁵ Տե՛ս Բեկնազարյան Հ., նշվ. աշխ., էջ 272-273:

համահունչ էր ֆաշիստական հորդանների դեմ ԽՍՀՄ ժողովուրդների միաձ ազատագրական պայքարին:

ИЗ ИСТОРИИ СОЗДАНИЯ ФИЛЬМА „ДАВИД-БЕК”

(посвящается 60-летию со дня экранизации)

ТОНЕЯН У. С.

Резюме

В годы Великой Отечественной войны перед армянской художественной кинематографией встали новые задачи. В годы войны появились новые исторические картины, взволновавшие зрителя военных лет своим патриотическим пафосом. Исторические романы, спектакли и фильмы вдохновляли народ на подвиги, напоминая о гордом духе предков, о великих заветах истории. В годы Великой Отечественной войны режиссер Ереванской киностудии А. Бекназарян экранизировал исторический фильм „Давид-Бек”, повествующий о героической борьбе армянского народа против чужеземных захватчиков.

Талантливое произведение искусства одновременно является и национальным достоянием, наглядным примером тому служит исторический фильм „Давид-Бек”.